ռեսցուք զսէրն և զերկիւղն Աստուծոյ ի սիրտս մեր. գնալ յամենայն օրէնս անարատութեամբ և արդարութեամբ և ամենայն աստուածպաշտութեամբ. զի այն է հաճոյ և ընդունելի առաջի Աստուծոյ. որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։ Զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայնէ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1577. Հայոց Թվ. ՌԻԶ. Եկաւ Էջմիածնին Տէր Թադէոս կաթողիկոսն՝ ի Կամենիցս. ընդ նմա երկու եպիսկոպոսք. մինն Տէր Յոհաննէս, և միւսն Տէր Փիլիպոս, և աբեղայ մի, որոյ անուն Վարպետ կոչէին, որ է Տէր Աւետիս։

1578. Հայոց Թվ. ՌԻԷ. Աղուհացիցն։ Թաթարն եկաւ և շատ վնաս արաւ այս երկրիս, և անհամար գերի տարաւ զմարդիկքն, և շատ սահմանացն զքաղաքն և զգեղսն այրեց և թալանեց, մանաւանդ բազում արս և զկանայսն և զտղայս ի սուր մաշեց. վասն զի ցրտային էր և ձմեռնային էր ժամանակս, և ձիւն սաստիկ կայր, որ ոչ կարացին փախչել ազատել. և զՕսդրօգն (Ostrog ի Վոլինիա) քաղաքն այրեց բովանդակ, և զամենայն բարութիւնս էառ. զոր զբերդն այլ հազիւ կարացին ազատել։ Այլ այս ամենայն եղեւ վասն Թուլասրտութեան և անհոգութեան Թագաւորիս իշխանացն ամենայն. զոր Տէր Աստուած զաւարտն ի բարին առնէ, և զմեզ ազատէ ի ձեռաց անօրինաց և անհաւատից. և մեր բազում յանցանաց թողութիւն շնորհեսցէ։

1578. Հայոց Թվ. ՌԻԷ. Ի Կամենից քաղաք Նոր եպիսկոպոս Նստաւ. անուն Գժենց Մարցին Օբաթ Մոկիլոքեյ։

1578–9. Թվ. ՌԻԷ. Ի Կամենիցս Հայտուքներն եկին ի Մաճարք, որք էին Թագաւորին Ստեփանոսին շրջակայ և բոլորովի զօրականք. և էին թվով 800, ընդ հեծեալս և ընդ հետեւակս. և կացին ի քաղաքս երկու շաբաթ. դարձեալ գնացին առ Թագաւորն։

1579. Թվ. ՌԻԸ, մարտի ԺԵ. Մեծ գետյարոյց եղեւ ի Կամենիցս, և բազում նեղութիւն և պակասութիւն հասոյց քաղաքիս, զխապախսն կոտրելով, և զայլ շինութիւնս աւերելով, զմարդիկն ընկղմելով։ Զոր վասն այսմ ամենայնի փառք Աստուծոյ։

1579. Թվ. ՌԻԸ. Հոկտ. ԺԴ. Թագաւորն Ստեփանոս մեծ և բազում զօրօքն գնաց ի Մոսքովի երկիրն, պատերազմել ընդ Մոսքովի քնազին. և աստուածային կարողութեամբ զԲոլոցքան էառ, զոր այս Բոլոցքան մեծ և անչափելի քաղաք կու անուանի, զոր Մոսկովցիքն առել էին ի այս Թագաւորէս. և էր ի յայն ժամանակէն մինչեւ ցայժմ 17 ամ։ Եւ վասն այս պատճառի քաղաքիս իշխանն որ կոչի Բերդի սդարոստան, մեծ ուրախութիւն և ցնծութիւն կատարեցին քաղաքիս մեծամեծք և դատաւորք. և զՀայ ազգն մեծարեցին, և հայցեցին զի ընդ նոսին կատարեսցեն զայս ուրախութիւնս.